



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

Tert.am կայքի լրագրող

Անի Օհանյանին

Փոստ՝ aniarami90@gmail.com

Հարգելի Ա. Օհանյան

Ի պատասխան Ձեր հարցման հայտնում եմ, որ.

1. 2019 թվականի փետրվարի 23-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կայացած <<Իմ քայլը հանուն Լոռու մարզի>> ներդրումային բիզնես-համաժողովին մասնակցել է շուրջ 350 մարդ:
2. Համաժողովին ներկայացվել են շուրջ 50 ծրագրեր, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտ-22, վերամշակող և արդյունաբերական ոլորտ-13, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ-3, գյուղատնտեսական ոլորտ-12:

Մեկնարկել է Ստեփանավանի տարածաշրջանում «Նյու Իդա» ընկերության կողմից շապրման գործարանի հիմնման աշխատանքները, որի համար Լոռու մարզպետարանի կողմից կազմվել է ՀՀ կառավարության կողմից ընդունված «Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրին հավանություն տալու և ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ: Ընկերության կողմից շապրման գործարանի համար անհրաժեշտ ընդհանուր 2.7169 հա հողամասերի նպատակային նշանակությունը արդենիսկ փոփոխվել է: Առաջիկա օրերի ընթացքում կավարտվի հողամասերը ընկերությանը տրամադրելու գործընթացը, որի արդյունքում կներդրվի շուրջ 50 մլն դոլար, կստեղծվի մոտ 50 աշխատատեղ: Ընկերության աշխատանքի արդյունքում արտադրված արտադրանքը ամբողջությամբ կիրացվի արտերկրում:

Արդվի համայնքում մեկնարկել է 2 մլն դոլար ծրագրային արժեքով <<Արդվի Ռեզորթ>> տուրիստական գոտու հիմնման աշխատանքները, անհրաժեշտ 1.0586 հա հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով հողաշինարարական գործը ներկայացվել է <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> քննարկմանը: Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման արդյունքում համայնքում կստեղծվի մոտ 50 նոր աշխատատեղ, կներդրվի մոտ 2 մլն դոլար, որը կնպաստի նաև շրջակա համայնքների զարգացմանը:

2019թ-ին «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից կառուցված կոմպոզիտային գազաբալոնների գործարանում կատարվել է շուրջ 3 մլրդ. 100 մլն. դրամի ներդրում:

Հարթագյուղ համայնքում ՀՀ Լոռու մարզպետարանի և «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի (Հոլանդական համաֆինանսավորում), հետ համատեղ պետական աջակցության սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 32.5 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորմամբ ընթացքի մեջ են համայնքում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքները, հիմնադրամի ֆինանսավորմամբ համայնքում նաև կառուցվել է հյուրատուն:

Լոռու մարզպետարանի ու ՄԱԶԾ/ՋԷՀ ակտիվ համագործակցության շրջանակներում Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ ու Վարդաբլուր բնակավայրերի չմշակվող, դեգրադացման վտանգի տակ գտնվող շուրջ 240 հեկտար հողատարածքների մշակման նպատակով այս տարվա մայիսից 29 մինչև հրամաններով մեկնարկել է արևային ֆոտովոլտային կայանների շահագործմամբ ջրառների ու պոմպակայանների կառուցման գործընթացը, ինչը հնարավորություն է տալու մարզի չմշակվող հողատարածքների թիվը նվազեցնել: Ծրագրի շրջանակներում հողատարածքներում մշակվելու են միայն ոչ ավանդական բարձրաժեք մշակաբույսեր, իսկ արևային ֆոտովոլտային կայանների շահագործման արդյունքում համայնքներն ունենալու են ցածր ինքնարժեքով ջուր և հավելյալ եկամուտ՝ խնայված էլեկտրոէներգիայի հաշվին: Նույն համագործակցության արդյունքում Գոգարան, Կաթնաջուր, Լեռնանցք համայնքներում մեկնարկել է ոռոգման համակարգերի կառուցման գործընթացը, ինչի արդյունքում ջրղի կղառնան երեք համայնքների թվով 250 հա հողատարածքներ:

Լոռու մարզի Սպիտակ համայնքում տեղի ու արտերկրի երեք գործարարների ներդրմամբ սկսվել է մեմբրանային ռեգերվուարներով ու կաթիլային ոռոգման համակարգով շուրջ 6 հեկտար հողատարածքներում ինտենսիվ այգու հիմնման աշխատանքները և նեխուրի ու ծնեբեկի մշակությունը:

Մարզպետարանի և «Ռեզնավարական զարգացման գործակալություն» ՀԿ համագործակցության արդյունքում «Անասնաբուծության զարգացում հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում 2019թ. ընդամենը ներդրվել է 90.68 մլն. դրամ, որից՝ Հոբարձի և Նորաշեն համայնքներում հիմնվել են անասնաբուծական կետեր՝ 280 հազար դրամ գումարով, Ժամանակակից սարքավորումներ է տրամադրվել «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ին և «Տարոն Մաթևոսյան» ՍՊԸ-ին՝ 35 մլն.դրամ արժեքով, հիմնվել են 2 «Առաջատար ֆերմաներ»՝ 30.5 մլն. դրամ, 24 ֆերմերների սուբսիդավորման եղանակով տրամադրվել է 97 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 24.9 մլն.դրամ

Մարզպետարանի աջակցությամբ ՄԱԿ-ի Զարգացման (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում, Մարգահովիտ ու Գուգարք համայնքների կողմից կատարված համաֆինանսավորման միջոցով իրականացվել է 50 հա անմշակ վարելահողերի վերականգման և մշակման ծրագիր (35 հա Մարգահովիտ համայնքում, 15 հա Գուգարք համայնքում): Ծրագրի շրջանակներում դոնոր կազմակերպության կողմից տրամադրվել է՝ ընդամենը՝տրակտոր 2 հատ, գյուղ.մեխանիզմ 5 միավոր, ինչպես նաև պարարտանյութ և դիզվառելիք: Համայնքների կողմից՝ մարզպետարանի միջնորդությամբ գնվել է մատչելի գներով սերմացու: Ներդրման գումարը կազմել է ընդամենը 35.0 մլն դրամ, որից 2 մլն. դրամը համայնքների կողմից, 33 մլն. դրամը՝ դոնոր կազմակերպության:

Մարզպետարանի օժանդակությամբ լուծվել է Սպիտակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից թռչնաբուծարան կառուցելու նպատակով, մատչելի պայմաններով ներդրողին 1.43966 հա տրամադրելու հարցը:

Մարզպետարանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ կառավարություն, տեղական տոհմային տնտեսությունների պետական ծրագրերի շրջանակներում ընդգրկելու նպատակով «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից բուծվող խոշոր եղջերավոր կենդանիները ֆերմերներին վաճառելու համար, որի արդյունքում մարզում կզարգանա տեղական տոհմային տնտեսությունները:

ԵՄ ֆինանսավորմամբ և «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի աջակցությամբ կառուցվում է «Ճամփեզրյա կայան» տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կենտրոն 2019թ.-ի առաջին կիսամյակի

դրությամբ 70 մլն դրամ ներդրմամբ:

Ավավերդի համայնքում ընթացքի մեջ է քարանձավային տուրիզմի կենտրոնի կառուցումը, արդեն իսկ ներդրվել է 48 մլն. դրամ:

«Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնը ՄԱԿ-ի համաֆինանսավորմամբ Գուգարք համայնքում հիմնել է «ԷկոՏուն Լոռի» պլաստմասե թափոնների վերամշակման արտադրամաս 13.000 դոլար ներդրմամբ, Սանահիտում «Pottery

House Armenia» կավարութեան կենտրոն 20.000 դոլար ներդրմամբ և Դեբեդ համայնքում «Debet Workation Hotel» հանգստի և աշխատանքի համար նախատեսված հյուրատուն 10.000 դոլար ներդրմամբ:

3. Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի գլխավորած պատվիրակությունը 2019 թվականի ապրիլի 22-26-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (Պեկին և Շանսի նահանգներում)՝ «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» խորագրով նախաձեռնությունների 2-րդ վեհաժողովին ներկայացրել է մարզի ներուժը, գործարարներին է ներկայացվել փետրվարին կայացած համաժողովի ընթացքում առավել հետաքրքրություն առաջացրած ծրագրերից մի քանիսի շնորհանդեսը:

24 ներդրումային ծրագրի համար <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն իրականացրել է մասնագիտական փորձաքննություն՝ ռիսկայնության աստիճանը որոշելու նպատակով, 2 ծրագրերի համար բանկի նախաձեռնությամբ կազմվել է բիզնես պլան: Փորձաքննություն անցած ծրագրերը տեղադրվել են << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակում:

12 ծրագիր՝ շնորհանդեսային տարբերակով անձամբ հեղինակների կողմից, ներկայացվել է Եվրամիության դեսպանատը՝ << 3 մարզերում զբոսաշրջության ոլորտի ծրագրերի ֆինանսաֆորման շրջանակներում (շուրջ 13 մլն. եվրո) ընդգրկելու համար: Համաժողովին ներկայացված ծրագրերը ուղարկվել են մի շարք արտասահմանյան ընկերություններ, դեսպանատներ, որոնք ցանկանում է ներդրումներ կատարել Հայաստանում: Վերը նշված ներդրումային ծրագրերը ուղարկվել են նաև Առևտրա-արդյունաբերական պալատ և Գործատուների միություն:

 Invalid signature



ԱՐՄԵՆԻԱ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ